

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄՍԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«21» _____01_____ 2020 թ.

ՀՀ Գիտությունների Ազգային Աակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ՝ **Ռադիկ Մարտիրոսյանի** (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտ **ՊՈԱԿ-ը**, ի դեմս տնօրեն՝ **Անահիտ Ղուկասյանի** (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված **121 557 100 (հարյուր քսանմեկ միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարիության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության

կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **121 557 100 (հարյուր քսանմեկ միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար հարյուր)** ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ի Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Ցուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Հ/հ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝



ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան
Բուսաբանության ինստիտուտ ՊՈԱԿ

ք. Երևան, Աճառյան 1

Հ/հ 900018005372

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Տնօրեն



Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

(անուն ազգանուն)

Հավելված 1
« 21 » 01 2020 թ.
N 2-13 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ Գիտությունների Ազգային Աակադեմիայի նախագահ՝ Ռադիկ Սարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի տնօրեն Անահիտ Ղուկասյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 21 » 01 2020 թ. N 2-13 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 121557100 (հարյուր քսանմեկ միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է ՀՀ ԳԱԱ միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ

Նախագահ՝


(տնօրենություն)



ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ

Տնօրեն՝



Անահիտ Ղուկասյան

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի

“Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգա-աշխարհագրական ասպեկտները”

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի գիտական գործունեության ծրագիրը վերաբերվում է “Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգո-աշխարհագրական ասպեկտները” թեմատիկայի, որն անմիջականորեն բխում է 2010-2020թթ. ինստիտուտի զարգացման և ռազմավարության ծրագրի հայեցակարգից: Հայաստանի ժամանակակից և բրածո ֆլորայի ուսումնասիրման արդյունքները անհրաժեշտ են բուսաբանության բոլոր ուղղությունների թե՛ տեսական, թե՛ կիրառական զարգացման համար, ինչպես նաև վայրի բույսերի օգտագործման և պահպանման տեսանկյունից: Բուսաբանական այգիները (Երևանում, Վանաձորում և Աևանում) հանդիսանում են գիտական, էկոլոգիական, ուսումնական և ռեկրեացիոն նշանակություն ունեցող գիտական հաստատություն, որն զբաղվում է բույսերի ներմուծման և կլիմայավարժեցման վերաբերյալ արժեքավոր հետազոտությունների կատարմամբ: Բույսերի կենսաբազմազանության ոլորտում այդ եզակի և ինքնատիպ գիտական հաստատության հիմնական նպատակը հանդիսանում է Երկրագնդի տարբեր բուսա-աշխարհագրական տարածաշրջաններից բարձր գեղազարդ և տնտեսապես արժեքավոր բուսատեսակների ներմուծումը, ցուցադրական գիտական հավաքածուների ստեղծումը, էկոլոգիական նոր պայմաններին դրանց հարմարողականության բացահայտումը և կենսաէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրումը, առավել հարմարված տեսակների քաղաքների և բնակավայրերի կանաչապատման մեջ ներդրումը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

- 1) Հայաստանի անոթավոր և բրածո բույսերի կարգաբանական ուսումնասիրում;
- 2) Հայաստանի Ֆլորայի տեսակների կենսակարգաբանական ուսումնասիրում (անատոմիական, պալինոլոգիական, ցիտոլոգիական, հնէաբուսաբանական);
- 3) Երկրաբուսաբանական և էկոլոգաֆիզիոլոգիական ուսումնասիրությունների կատարում;
- 4) Հայաստանի ֆլորայի հազվագյուտ և անհետացող տեսակների էկոլոգո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունները:
- 5) Հայաստանի ֆլորայի դժվար ծյող տեսակների բազմացման ֆիզիոլոգիան մեկուսացված կուլտուրայի և սերմային մեթոդների միջոցով:
- 6) Երևանի, Սևանի և Վանաձորի Բուսաբանական այգիներում ծառագիտական, բույսերի ներմուծման և կլիմայավարժեցման ուսումնասիրություններ:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Նախատեսվում է շարունակել աշխատանքները “Հայաստանի անոթավոր բույսերի ատլաս”-ի ստեղծման վերաբերյալ, որում կներկայացվեն Հայաստանի ֆլորայի 913 ցեղերի և 160 ընտանիքի պատկանող 3800 տեսակների 1/3 մասը: Ատլասում կստեղծվի տվյալ տեսակի լուսանկարը բնության մեջ, կնշվի հավաքի տեղավայրը, կորոշվեն անունները, հավաքի

տարեթիվը, կոլեկտորը: Նախատեսվում է շարունակել Կարգաբանության բաժնում պահվող ՀԱԱՀ-ից ստացած հերբարիումային նյութի որոշում և մշակում: Նախատեսվում է *Punica granatum* L. տեսակի ուսումնասիրման շարունակում և «Վայրաճ նոնենին Հայաստանում» թեմայով մենագրության պատրաստում: Կատարվելու է *Sorbus hajastana* էնդեմիկ ծառատեսակի վիճակի ուսումնասիրություն, պահպանության հատուկ մեթոդների կիրառում:

Էթնոբուսաբանական ուսումնասիրությունների շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել.

- Բույսերի կիրառումը ավանդական ծեսերում, բույսերի դերը ազգային հավատալիքներում հարցերի հետազոտում;

- Բույսերի բուժիչ, ուտելու, համեմունքային, տեխնիկական նպատակով օգտագործման մասին նոր տվյալների հավաքագրում;

- Հայկական ժողովրդական բուսանունների (Ֆիտոնիմների) գրանցում տարբեր դիալեկտներում (մասնավորապես՝ Սյունիքի բառարանում):

Վերջին տարիներին կատարվել են նշանակալի աշխատանքներ բրածո բույսերի հավաքածուների կարգավորման, դրանց՝ ըստ ժամանակագրական սանդղակի դասակարգման, պլեյստոցենյան ժամանակաշրջանի տեղավայրերից հավաքված բույսերի էլեկտրոնային կատալոգի ստեղծման, ինչպես նաև առանձին տաքսոնների ուսումնասիրությունների իրականացման ուղղությամբ: Բրածո բույսերի տեղավայրերի ուսումնասիրման ասպարեզում աշխատանքներ են կատարվել արդեն հայտնի տեղավայրերի մոնիտորինգի իրականացման ուղղությամբ: 2020 թ. կատարվեն գիտարշավներ նոր տեղավայրերի հայտնաբերման և ուսումնասիրման ուղղությամբ: Համապատասխան դրամաշնորհի ստացման դեպքում պլանավորվում է ուսումնասիրել Սևանի ավազանի բրածո տորֆերում պարունակվող բրածո բույսերի տեսակային կազմը: Նախատեսվում է նաև ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում հնէաբուսաբանական և ժամանակակից բույսերի թանգարանի կազմակերպման աշխատանքների շարունակումը: Նախատեսվում է շարունակել պլեյստոցենից ավելի հին ժամանակաշրջանների (պլիոցեն, միոցեն, կավիճ) բրածո տաքսոնների ուսումնասիրություններ, ինչպես նաև դրանցով կազմված բուսական համակեցությունների բացահայտման և պալեոկլիմայի ռեկոնստրուկցիայի աշխատանքներ: Նախատեսվում է կատարել կուլտուրական բույսերի վայրի ազգակիցների (CWR) և դրանց բրածո նախնիների տեսակների բացահայտման վերաբերյալ մի շարք ուսումնասիրություններ:

Ներկայումս Բուսաբանության ինստիտուտը ՀՀ միակ գիտական հաստատությունն է, որտեղ զարգանում է համեմատական անատոմիան: Այս մեթոդով ստացված տվյալները, հնարավորություն ստեղծելով ճշտումներ մտցնել տաքսոնի մեկնաբանման հարցերում, օգտագործվել են ինստիտուտում տարվող մեծ թվով գիտական աշխատանքներում: Անատոմիական ուսումնասիրությունների շրջանակներում 2020 թ. նախատեսվում է վերանայել Հայաստանի ֆլորայի *Gagea* ցեղի տեսակային կազմը: Շարունակվելու է տարբեր էկոլոգիապես լարված բնակավայրերին բնորոշ, բայց մորֆոլոգիապես նմանատիպ տեսակների ցողունների միկրո- և մակրոկառուցվածքների ուսումնասիրմանը, դրանց հարմարողական պոտենցիալի բացահայտմանը նվիրված աշխատանքները: Այդպիսի մոտեցումը թույլ կտա կանխագուշակել հազվագյուտ և անհետացող տեսակների արեալների փոփոխության հնարավորությունները սպասվող կլիմայի փոփոխության պայմաններում: Որպես թիրախ ընտրվել է *Potentilla porphyrantha* տեսակը, կկիրառվի համեմատական վերլուծության մեթոդը՝ թիրախային տեսակը կհամեմատվի *Potentilla* ցեղի էկոլոգիապես տարբերվող տեսակների հետ:

Պալինոլոգիական ուսումնասիրությունների շրջանակներում 2020թ. նախատեսվում է ավարտել և ամփոփել «Հայաստանի ծառերի և թփերի ծաղկափոշու ատլասում» ընդգրկված Ծածկասերմերի (*Angiospermae*) 40 ընտանիքների և 90 ցեղերի մի շարք ներկայացուցիչների ծաղկափոշու մորֆոլոգիական ուսումնասիրությունները: Ստացված արդյունքները հիմք կծառայեն կարգաբանական բանալիների ստեղծման համար ընտանիքների և ցեղերի մակարդակով (լուսային մանրադիտակի (ԼՄ) օգտագործմամբ), որոնք կարող են ունենալ ինչպես լայն տեսական, այնպես էլ գործնական նշանակություն մի շարք վիճելի կարգաբանական հարցերի լուծման, ինչպես նաև ալերգեն և մեղրատու ծառատեսակների ծաղկափոշու որոշման գործում: Կշարունակվեն աշխատանքները կապված Իկոնոտեկայի՝ լուսային և սկաներային մանրադիտակի մակարդակով ծաղկափոշու թվային լուսանկարների հավաքածուի ստեղծման հետ:

Պալինոլոգիական խմբի երիտասարդ հայցորդի ատենախոսական աշխատանքի շրջանակում կշարունակվեն *Chenopodiaceae* Vent. ընտանիքի ներկայացուցիչների պալինոմորֆոլոգիական հետազոտությունները (լուսային մանրադիտակի մակարդակով): Աշխատանքի հիմնական նպատակն է – ծածկասերմերի հնագույն ընտանիքներից մեկի կարգաբանության, ֆիլոգենիայի, ինչպես նաև էկոլոգիայի մի շարք խնդիրների լուծումը պալինոլոգիական մեթոդների կիրառմամբ: Ժամանակակից գիտական պահանջներին համապատասխանելու համար անհրաժեշտ է հետազոտություն կատարել նաև սկաներային էլեկտրոնային մանրադիտակի (ՄԵՄ) մակարդակով, որը հնարավոր կլինի միայն լրացուցիչ ֆինանսավորման դեպքում:

Կարիոլոգիական ուսումնասիրությունների շրջանակներում 2020 թ. նախատեսվում է շարունակել Հայաստանի ֆլորայի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ բույսերի ցիտոլոգիական հետազոտությունների կատարում: Նախատեսվում է կատարել հազվագյուտ կարմիրգրքային տեսակների կարիոտիպերի ուսումնասիրություն:

Երկրաբուսաբանության բնագավառում ներկայումս, երբ երկրի առջև առավել սուր դրված են բնապահպանական խնդիրները՝ կապված կենսաբազմազանության պահպանման անհրաժեշտության հետ (ներառյալ էկոհամակարգերի մակարդակը), իսկ էկոհամակարգային մոտեցումը պահպանման միջոցների մշակման ժամանակ հանդիսանում է առավել արդյունավետ, միանգամայն անհրաժեշտ է Հայաստանի էկոհամակարգերի և բնակմիջավայրերի դասակարգային սխեմայի մշակումը: 2020 թ. նախատեսվում է հազվագյուտ էկոհամակարգերի ուսումնասիրումը և վտանգների վերլուցությունը: Կանցկացվի նաև Հայաստանի էկոհամակարգերի փոփոխությունների ուսումնասիրման հետազոտությունները, այդ թվում կարևորագույն բուսաբանական տարածքներին պատկանող՝ կարևորագույն էկոհամակարգերի և բնակմիջավայրերի վրա նախատեսվող ինվազիվ բուսատեսակների ազդեցության գնահատում: Նախատեսվում է էկոհամակարգերի դասակարգային իերարխիկ սխեմայի հինգերորդ մակարդակի մշակման աշխատանքների շարունակումը:

Բույսերի ֆիզիոլոգիայի ոլորտում նախատեսվում է Հայաստանի ֆլորայի էնդեմիկ և հազվագյուտ բուսատեսակների ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրում՝ փոփոխվող պայմաններում դրանց պահպանման հնարավորության գնահատման նպատակով: 2020 թ. կիրականացվի Արարատյան հարթավայրի մի շարք հազվագյուտ, ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հալոֆիտ բուսատեսակների ինչպես նաև մի շարք բարձրլեռնային տեսակների կենսա-էկոլոգիական և որոշ ֆիզիոլոգիական հատկանիշների ուսումնասիրություն:


Բույսերի ներմուծում և կլիմայավարժեցում. Ներկայումս Բուսաբանության ինստիտուտի մասնագետները մշակում են արդիական արդյունավետ ծրագրեր՝ պահպանելու և վերականգնելու Հայաստանի Բուսաբանական այգիներում ստեղծված համաշխարհային ֆլորայի կենսաբազմազանությունը, այն հարստացնելու նոր տնտեսապես արժեքավոր և բարձր գեղազարդ տեսակներով, ինչպես նաև կատարել համեմատական հետազոտություններ՝ բացահայտելու Հայաստանի տարաբնույթ բնակլիմայական պայմաններ ունեցող Բուսաբանական այգիներում աճեցվող տարբեր

աշխարհագրական ծագում և տաքսոնոմիական պատկանելիություն ունեցող ինտրոդուցենտների հարմարողականության աստիճանը: Համաշխարհային ֆլորայի հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանությունը *ex situ* պայմաններում անմիջականորեն բխում է Բուսաբանական այգիների բույսերի պահպանության գծով միջազգային խորհրդի պահանջից: Հիմք ընդունելով ստեղծված գիտական հավաքածուների գոյության նոր պայմաններում հարմարողականության առանձնահատկությունները 2020թ. կշարունակվեն տարբեր բուսաաշխարհագրական տարաշրջանների (ֆլորիստիկ շրջանների) գնահատման աշխատանքները, որոնք ներմուծման աղբյուր են հանդիսանում Հայաստանի անտառաճման շրջանների և բնակավայրերի կանաչապատման համար: Նախատեսվում է շարունակել աշխատանքները ծաղկային մշակաբույսերի առանձին տաքսոնոմիական խմբերի, ինչպես նաև արևադարձային և մերձարևադարձային հավաքածուների հարստացման ուղղությամբ, կատարել բույսերի կենսամորֆոլոգիական և բազմացման (սերմերով և վեգետատիվ) առանձնահատկությունների ուսումնասիրություններ, ինչպես նաև շարունակել աշխատանքները արևադարձային և մերձարևադարձային բույսերի հավաքածուի տվյալների բազայի ստեղծման ուղղությամբ:

Հայաստանի Ֆլորայի Սերմերի Բանկի աշխատանքների ընթացքում նախատեսվում են հետևյալ աշխատանքների շարունակումը: Բուսատեսակների պոպուլյացիաների ուսումնասիրություններ և սերմերի հավաք ՀՀ բոլոր մարզերում: Հավաքների ընթացքում ակնկալվում է համալրել Հայաստանի Ֆլորայի Սերմերի Բանկի հավաքածուն: Կատարվելու են որոշ վտանգված տեսակների կարգավիճակի գնահատումներ: Համապատասխան հերքարիումային նմուշները պահվելու են Բուսաբանության ինստիտուտի բույսերի պահոցում (ERE): Կատարվելու են ծլունակության ուսումնասիրություններ բոլոր հավաքների վերաբերյալ: Հազվագյուտ բուսատեսակների առանձնյակները տեղափոխվելու են ինստիտուտի “Հայաստանի Կենսաբազմազանության Պահպանման Կենտրոն” *ex situ* պահպանության և հատուկ ուսումնասիրությունների նպատակով: Կատարվելու է Հայաստանի Ֆլորայի Սերմերի Բանկի տվյալների բազայի համալրում:


Կենսատեխնոլոգիայի ոլորտում Հայաստանի ֆլորայի հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանման և վերարտադրողականության նպատակով նախատեսվում է մշակել պայմաններ դրանց կլոնալ միկրոբազմացման և սերմնային բազմացման համար: Նախատեսվում է ներմուծել մեկուսվացված կուլտուրայի մեջ հազվագյուտ անհետացող տեսակները: Աշխատանքները կկատարվեն կլոնալ միկրոբազմացման բոլոր փուլերով համաձայն ընդունված մեթոդիկայի, ինչպես նաև կուսումնասիրվեն մեկուսացված հյուսվածքների տրոֆիկական և հորմոնալ պահանջարկները: Նախատեսվում է հետազոտել երեք հազվագյուտ բուսատեսակ: Վերարտադրողական կենսաբանության և սերմնային բազմացման հավաքածուի հազվագյուտ և անհետացող տեսակների ուսումնասիրության համար նախատեսվում է բույսերի աճեցում *ex situ* պայմաններում, բույսերի գեներատիվ ոլորտի բազմացման համակարգի և մորֆոբիոմետրիկ ցուցանիշների միջև կապի որոշումը:

Կազմակերպության
տնօրեն


(ստորագրություն)

(Անահիտ Ղուկասյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար


(ստորագրություն)

(Շիքար Վարդանյան)
(անուն ազգանուն)

ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *


Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման

“Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգա-աշխարհագրական ասպեկտները” ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
2020թ, 1-ին եռամսյակ		Հայաստանի ֆլորայի տաքսոնոմիական ուսումնասիրություն; Հայաստանի ծառայությունների պալինոմորֆոլոգիական ուսումնասիրություն: Հազվագյուտ տեսակների ցանքայի և ծլեցման համար սերմերի նախապատրաստում: Սերմերի ցուցակի կազմում Բուս. ի-տի դելեկտուաի համար:	Մորֆոլոգո-հերբարիումային, պալինոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական ուսումնասիրություններ	Անալիզների արդյունքների ամփոփում հոդվածների հանձնում:	01.01.2020-31.03.2020	24 311,4
2020թ, 2-րդ եռամսյակ		Հայաստանի ֆլորայի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ բույսերի ցիտոլոգիական հետազոտություններ; Հայաստանի բուսականության դասակարգման սխեմայի վերաբերյալ աշխատանքներ: դաշտային աշխատանքներ էքսպոզիցիոն հողամասում: Տարածքի բարելավում, հավաքածուի գույքագրում: Բուսաբանական այգու ծաղկանոցների ձևավորում և խնամք:	Մորֆոլոգո-հերբարիումային, պալինոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական ուսումնասիրություններ	Հողվածների տպագրում մասնակցություն Միջ. Կոնֆերանս. Գիտական աշխ. զեկուցումներ Ին-տի գիտ. խորհրդում	01.04.2020-30.06.2020	30 389,3
2020թ, 3-րդ եռամսյակ		Չերբարիումային նյութի որոշում: Հայաստանի բուսականության դասակարգման սխեմայի մշակման վերաբերյալ աշխատանքներ: Դաշտային աշխատանքներ էքսպոզիցիոն հողամասում, բույսերի խնամք: մերձարևադարձ և արևադարձ. բույսերի գիտական հավաքածուի ընդլայնման ուղղությամբ աշխատանքներ: Բուսաբանական այգու ծաղկանոցների խնամք, տնկանյութի հավաք և նախապատրաստում հաջորդ վեգետացիոն շրջանի համար, տարբեր ծաղկային հավաքածուների ստեղծում: վտանգված տեսակների սերմերի հավաք, վերամշակում և ex situ երկարաժամկետ պահպանություն “Հայաստանի ֆլորայի սերմերի բանկ”-ում	Մորֆոլոգո-հերբարիումային, պալինոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական ուսումնասիրություններ	Հողվածների տպագրում Մասնակցություն Միջազգային կոնֆերանսներում.	01.07.2020-31.09.2020	30 389,3
2020թ, 4-րդ եռամսյակ		Չերբարիումային նյութի ուսումնասիրում: Scilla ցեղերի անատոմիական ուսումնասիրության ամփոփում; քրոմոսոմների, ծաղկափթշու հետազոտությունների ամփոփում; Հայաստանի բուսականության դասակարգման սխեմայի մշակման ամփոփում, հաշվետվությունների պատրաստում:	Մորֆոլոգո-հերբարիումային, պալինոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական ուս.	Հողվածների տպագրում Ամփոփիչ Հաշվետվության պատրաստում	01.10.2020-31.12.2020	36 467,1

Ընդամենը

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

(Անահիտ Դուկասյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Շիրայր Վարդանյան)
(անուն ազգանուն)

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

Հավելված 4
 « 21 » 01 2020 թ.
 N 2-13 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի
 (ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ	103 656	20 731,2	25 914	25 914	31 096,8
2	տնտեսական և այլ ծախսեր*	17 901,1	3 580,2	4 475,3	4 475,3	5 370,3
ԸՆԴԱՄԵՆԸ		121 557,1	24 311,4	30 389,3	30 389,3	36 467,1

Կազմակերպության տնօրեն՝


 (ստորագրություն)

(Անահիտ Ղուկասյան)
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

(Սուսաննա Մարտիրոսյան)
 (անուն ազգանուն)




* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

Հավելված 4.1
 « 21 » 01 2020 թ.
 N 20-13 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	13 650
	էլեկտրաէներգիայի ծառայություն	3 400,0
	գազի ծառայություն	3 800,0
	ջրամատակարարման ծառայություն	5 700
	կապի ծառայություն	600
	աղբահանություն	150
2	Գույք	-
3	Սարքեր և սարքավորումներ	-
4	Նյութեր	3051,1
5	Գործուղումներ	1200
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	-
	
Ընդամենը		17 901,1

Կազմակերպության տնօրեն՝

 (ստորագրություն) Անահիտ Ղուկասյան (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

 (ստորագրություն) Մուսաննա Սարգսյան (անուն ազգանուն)

Կ.Տ.

* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի
(ծրագրի անվանումը)


h/h	ազգանուն	անուն	հայրանուն	գիտական աստիճան	պաշտոն	Աշխատավարձ ներառյալ եկամտային հարկը
	1	2	3	6	7	9
1.	Աթաբեկյան	Գագիկ	Ռոբերտի		Վանաձորի բաժանմ. վարիչ	105000
2.	Ալեքսանյան	Ալլա	Սամվելի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	28000
3.	Ալեքսանյան	Նագիկ	Գագիկի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	115000
4.	Ալոյան	Արմինե	Սուրենի		ավագ լաբորանտ	93000
5.	Աչոյան	Արփինե	Լեոնիկի	կենս. գիտ. թեկնածու	կրտսեր գիտաշխատող	95000
6.	Ասատրյան	Աննա	Թելմանի	կենս. գիտ. թեկնածու	առաջատար գիտաշխատող	115000
7.	Ասատրյան	Մարիետա	Յաշայի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	105000
8.	Ավագյան	Դավիթ	Ժիրայրի		Սևանի բաժանմ. այգեգործ-բանվոր	93000
9.	Արասխանյան	Արամ	Շեկոյի		բանվոր	90000
10.	Արասխանյան	Նորիկ	Շեկոյի		փականագործ	120000
11.	Արսենյան	Անուշ	Երվանդի		բանվորուհի	90000
12.	Արսխանյան	Ազիզ	Ռազմիկի		էներգետիկ	100000
13.	Բոգդանյան	Աշոտ	Մկրտչի		տնտեսավար-պարետ	110000
14.	Գաբրիելյան	Իվան	Գեորգիի	կենս. գիտ. թեկնածու	առաջատար գիտաշխատող, բաժնի վարիչ	150000
15.	Գալստյան	Լիլիթ	Հակոբի		լաբորանտ	46500
16.	Գասպարյան	Արման	Էդուարդի		բանվոր	96000
17.	Գասպարյան	Լուսիկ	Վարազդատի		հաշվապահ	120000
18.	Գատրյան	Գայանե	Մանուկի		գիտաշխատող	115000
19.	Գրիգորյան	Անատոլիա	Արտավազդի		ավագ լաբորանտ	90000
20.	Գրիգորյան	Հրաժին	Ազարյայի		տնկարանի վարիչ	90000
21.	Գրիգորյան	Մանիկ	Մերուժանի		կրտսեր գիտաշխատող	93000

22.	Էլբակյան	Արաքսյա	Հարությունի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	130000
23.	Խանամիրյան	Ելենա	Գագիկի		տնօրենի օգնական, կադրերի գծով մասնագետ	165000
24.	Խաչատրյան	Լիլիթ	Ռոբերտի		կրտսեր գիտաշխատող	48000
25.	Խաչատրյան	Սիրուշ	Էդուրադի		ավագ լաբորանտ	93000
26.	Հակոբյան	Ժանետա	Անդրանիկի	կենս. գիտ. դոկտոր	առաջատար գիտաշխատող	130000
27.	Հայրապետյան	Ալլա	Մկրտիչի	կենս. գիտ. դոկտոր	առաջատար գիտաշխատող	130000
28.	Հայրապետյան	Նարինե	Ահարոնի		կրտսեր գիտաշխատող	93000
29.	Հարությունյան	Ադունիկ	Վիլհելմի		ծաղկաբույծ-մասնագետ	93000
30.	Հովակիմյան	Ժաննա	Հովիկի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	110000
31.	Հովհաննիսյան	Լուսյա	Նուրիջանի		բուսապահոցի տեխնիկ	90000
32.	Հովհաննիսյան	Հռիփսիմե	Իգիթի		կրտսեր գիտաշխատող	93000
33.	Հովհաննիսյան	Մարինե	Էդգարի	կենս. գիտ. դոկտոր	բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող	185000
34.	Ղարիբյան	Մարգարիտա	Գրիշայի		գրադարանավար, առաջատար մասնագետ	95000
35.	Ղուկասյան	Անահիտ	Գերոզի	կենս. գիտ. թեկնածու	տնօրեն, առաջատար գիտաշխատող	315000
36.	Ղուկասյան	Գրետա	Սերգեյի		առաջատար մասնագետ	90000
37.	Մարգարյան	Լուսինե	Վահանի	կենս. գիտ. թեկնածու	գիտական քարտուղար	95000
38.	Մանուկյան	Արմեն	Արտավազի		Սևանի բաժանմ. այգեգործ-բանվոր	90000
39.	Մարդանյան	Յուրիյ	Նիկոլայի		բանվոր	96000
40.	Մարտիրոսյան	Աիդա	Վահանի		Վանաձորի բաժ. այգեգործ-բանվորուհի	90000
41.	Մարտիրոսյան	Լորա	Յուրիի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	115000
42.	Մարտիրոսյան	Սուսաննա	Մարգսի		գլխ. հաշվապահ	215000
43.	Միխայլովա	Ելենա	Սերգենա		բանվորուհի	90000
44.	Միրիջանյան	Միքայել	Սամվելի		համակարգչային տեխնիկայի սպասարկող	93000
45.	Մնացականյան	Միմոն	Միխայելի		Սևանի բաժանմ. վարիչ	105000
46.	Մովսիսյան	Գագիկ	Գուրգենի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	110000

47.	Մուրադյան	Ալվարդ	Հրանտի		կրտսեր գիտաշխատող	93000
48.	Մուրադյան	Նելլի	Նորիկի		կրտսեր գիտաշխատող	93000
49.	Նավասարդյան	Եվգենյա	Միխայելի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	50000
50.	Նազարյան	Նաիրա	Ռաֆիկի		հավաքարար	115000
51.	Ներսեսյան	Անուշ	Անրիի	կենս. գիտ. թեկնածու	առաջատար գիտաշխատող, բաժնի վարիչ	150000
52.	Շաբոյան	Գայանե	Գևորգի		ավագ լաբորանտ	93000
53.	Պապիկյան	Աստղիկ	Սարգսի		կրտսեր գիտաշխատող	93000
54.	Պետրոսյան	Աղվան	Մուրենի		բանվոր	90000
55.	Զանջուղազյան	Կարինե	Զոհրաբի		կրտսեր գիտաշխատող	70000
56.	Զիլավյան	Սերյոժա	Ալեքսանի		գլխավոր գյուղատնտես	120000
57.	Սարգսյան	Մերինե	Վոլոդյայի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	110000
58.	Սմբատյան	Սեդրակ	Հովհաննեսի		մեխանիկ- վարորդ	120000
59.	Սոնյան	Հասմիկ	Հովհաննեսի		կրտսեր գիտաշխատող	93000
60.	Ստեփանյան	Նինա	Պապինի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	110000
61.	Վանեսյան	Արտակ	Ժորայի		Վանաձորի բաժ. այգեգործ-բանվոր	90000
62.	Վարդանյան	Ժիրայր	Հմայակի	կենս. գիտ. դոկտոր	գիտական ղեկավար, բաժնի վարիչ	310000
63.	Վարդանյան	Սահակ	Վարդանի	տնտ. գիտ. թեկնածու	փոխտնօրեն	235000
64.	Փայտյան	Յուրիկ	Ենոքի		գյուղատնտես	120000
65.	Օգանեզովա	Գոհարիկ	Հրանտի	կենս. գիտ. դոկտոր	գլխավոր գիտաշխատող	150000
66.	Օհանյան	Շուշան	Հրանտի		տեխնիկ	90000
67.	Ֆայվուշ	Գեորգի	Մարկի	կենս. գիտ. դոկտոր	բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող	185000
68.					կրտսեր գիտաշխատող	46500
69.					ավագ լաբորանտ	93000
70.					այգեգործ-բանվոր	90000
71.					այգեգործ-բանվոր	90000
72.					այգեգործ-բանվոր	90000
73.					այգեգործ-բանվոր	90000

74.					այգեգործ-բանվոր	90000
75.					այգեգործ-բանվոր	90000
76.					այգեգործ-բանվոր	90000
77.					այգեգործ-բանվոր	90000
78.					այգեգործ-բանվոր	90000
79.					այգեգործ-բանվոր	90000
Ընդամենը						8638000

Կազմակերպության
տնօրեն՝


(ստորագրություն) (Արսենիկ Ղուկասյան)
(անուն ազգանուն)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝


(ստորագրություն) (Արամ Խանամիրյան)
(անուն ազգանուն)

